



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆՆ ՈՒ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՆ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՒ ԱԶԳ. ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԱՆԹԻԼԻԱՍԻ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՆ

Ինչպես հաղորդած էինք անցեալ շաբաթ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազանն ու Ազգային Վարչութեան անդամներ Անթիլիաս մեկնած էին, մասնակցելու համար Վեհափառ Հայրապետին եւ Ազգ. Կեղր. Վարչութեան հետ ժողովներու:

Կաթողիկոսութեան տեղեկատուութեան գրասենեակը կը հաղորդէ որ՝



Չորեքշաբթի, 18
Նոյեմբերէն, մինչեւ Ուրբաթ 20
Նոյեմբեր, երեք օրերու վրայ
Նիստեր գումարուեցան
Անթիլիասի Մայրավանքին մէջ,
հրաւերով ու Նախագահութեամբ
Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.
Կաթողիկոսի:

Ազգային Կեղրոնական
Վարչութեան Կրօնական ու
քաղաքական ժողովներուն հետ
հանդիպում ունենալու
հրաւիրուած էին Հիւսիսային
Ամերիկայի երեք Թեմերու՝

Արեւելեան, Արեւմտեան եւ Գանատայի Առաջնորդ Սրբազաններ՝ Բարձր. Տ. Օշական Արք. Չոլոյեան, Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան եւ Բարձր. Տ. Խաժակ Արք. Յակոբեան, եւ Ազգ. Իշխանութեանց Ներկայացուցիչ անդամներ:

Արեւմտեան մեր Թեմէն մասնակցեցան Ազգ. Կեղրոնական Վարչութեան անդամներէն Տիարք Խաժակ Տիքիճեան եւ Վահէ Եագուպեան, ինչպէս նաեւ Ազգ. Վարչութեան ատենապետն ու փոխ ատենապետը՝ Դոկտ. Կարօ Յակոբեան եւ Տիար Կարօ Աւագեան:

Կրօնական ու քաղաքական ժողովներու հետ քննարկումները ընդգրկեցին հոգեւոր, կրթական-դաստիարակչական, վարչական ու ընկերային հարցեր, ինչպէս նաեւ իրաւական խնդիրներ:

Թեմակալ առաջնորդները մանրամասն բացատրութիւններ տուին իրենց թեմի իրավիճակին մասին, զանազան երեսներով, եւ ժողովը քննարկումներու ճամբով յանգեցաւ կարգ մը որոշումներու, որոնցմէ մաս մը անմիջապէս պիտի գործադրուի, իսկ ուրիշներ՝ երկար ժամանակի վրայ տարածուած ընթացք մը պիտի ունենան:

Վեհափառ Յայրապետը առաջին հերթին բարձր գնահատեց երեք թեմերուն կազմակերպ ու կենսունակ գործունեութիւնը:

Ուրախութեամբ հաստատեց որ անոնք կը վայելեն մեր ժողովուրդին անվերապահ վստահութիւնը ու գործակցութիւնը, յատկապէս երիտասարդական միաւորներով, որոնք մեր ժողովուրդի ու եկեղեցւոյ ապագան կ'երաշխաւորեն:

Նորին Սուրբ Օծութիւնը յատուկ թելադրութիւններ կատարեց իւրաքանչիւր թեմի, նկատի ունենալով իւրաքանչիւրին առանձնայատուկ պայմանները:

Նորին Սրբութիւնը յատկապէս շեշտեց մեր եկեղեցւոյ առաքելութիւնը ըստ արժանւոյն կենսագործելու հրամայականը, լայն տեղ տալով մեր երիտասարդութեան հոգեւոր կազմաւորման, հետագային անոր վստահելու համար պատասխանատու պաշտօններ ազգի ծառայութեան անդաստանին մէջ:

Յատուկ հանդիպում մը կայացաւ նաեւ երեք թեմերուն հատ միասնաբար, քննելու համար այն մտահոգութիւնները ու մարտահրաւերները, որոնք երեք թեմերուն համար հասարակաց են, նկատի ունենալով որ անոնք կը գործեն միեւնոյն տարածաշրջանին մէջ:

Սոյն հանդիպումին ընթացքին երեք թեմերու միջեւ գործակցութեան նոր ծրագրաւորում կատարուեցաւ, ինչպէլու համար մարդոյժն ու նիւթական սպառումը:

Երեք օրերու վրայ տարածուած հանդիպումները փորձառութեանց փոխադարձ հարստացման առիթ ըլլալուն հետ, նաեւ շարք մը տեղական հարցերու եւ դժուարութիւններու լուծման առիթներ հանդիսացան:

Յայտնենք նաեւ որ Լիբանան գտնուող Արեւմտեան Ամերիկայի Ազգային իշխանութիւններու անդամները այցելեցին «Ազդակ» օրաթերթի խմբագրատունը, տեսակցեցան տնօրէնութեան հետ եւ ծանօթացան «Ազդակ»ի աշխատանքներուն:

PRELATE AND EXECUTIVE COUNCIL MEMBERS PARTICIPTED IN MEETINGS AT THE CATHOLICOSATE

As reported last week, on Sunday, November 15th, 2009, H.E. Archbishop Moushegh Mardirossian departed for Lebanon to participate in meetings at the Catholicosate presided over by H.H. Catholicos Aram I. The Prelates of the three North American Prelacies, along with Central Executive and Executive Council representatives, participated in the meetings which took

place from November 18th to the 20th. The Western Prelacy delegation included Central Executive Council members Mr. Khajag Dikijian and Mr. Vahe Yacoubian, and Executive Council Chair and Vice-Chair Dr. Garo Agopian and Mr. Garo Avakian.



During the three-day meetings, the Prelates reported on the activities, endeavors, and challenges of their respective Prelacies and received guidance and suggestions from His Holiness based on their individual circumstances. The Prelates also participated in a joint meeting to discuss and examine shared concerns and challenges.



During their stay in Lebanon the Prelacy representatives also had the opportunity to visit the Aztag Daily offices where they met with the staff and became familiarized with the workings of the newspaper.

ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ

Լիբանանի անկախութեան 66-ամեակին առիթով, Լիբանանի հիւպատոսարանը կազմակերպած է պաշտօնական ընդունելութիւն մը, որ տեղի պիտի ունենայ Կիրակի, 22 Նոյեմբերի երեկոյեան ժամը 6-ին, Պիլթմոր Պանդոկի մէջ, Լոս Անճելըս:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Գերպ. Տ. Միւռն Տ. Կրդ. Ազնիկեան ներկայ պիտի ըլլայ ընդունելութեան: Ներկայ պիտի ըլլան նաեւ ժողովականութեան ներկայացուցիչներ:

LEBANESE INDEPENDENCE DAY CELEBRATION

In celebration of the 66th anniversary of the independence of Lebanon, the Lebanese Consulate General of Los Angeles has organized a reception to take place on the evening of Sunday, November 22nd, at the Biltmore Hotel.

Very Rev. Fr. Muron Aznikian will represent the Prelate at the reception.

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԳԻՄՆԱԴՐԱՄԻ ԹԵԼԵԹՈՆԻ ԿԱԼԱՅԻՆ

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի կալա ճաշկերոյթը տեղի պիտի ունենայ Կիրակի 22 Նոյեմբերի երեկոյեան ժամը 7-ին, Hyatt Regency Century Plaza պանդոկին մէջ: Պատուոյ հիւրերն են Արցախի Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեան եւ Արցախի Վարչապետ՝ Արայիկ Յարութիւնեան:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան ներկայ պիտի ըլլայ ճաշկերոյթին: Ներկայ պիտի ըլլան նաեւ Ազգային Վարչութեան եւ Ժողովականութեան ներկայացուցիչներ:

ARMENIA FUND GALA BANQUET

On Sunday, November 22nd, the Armenia Fund Gala Banquet will take place at the Hyatt Regency Century Plaza Hotel. The guests of honor are H.E. Archbishop Barkev Mardirossian, Primate of the Diocese of Karabakh, and NKR Prime Minister Araik Harutyunyan.

H.E. Archbishop Yeprem Tabakian will represent the Prelate at the banquet. Executive Council members and Prelacy parishes' representatives will also be in attendance.
